Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1954 թ. մարտի 20-ին, Սումգայիթ քաղաքում (Ադրբեջանական ՍՍՀ):

Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1966 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան, որտեղ ավարտել է դպրոցը մաթեմատիկական թեքումով:

1971—72 թթ. ուսանել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրա-տեխնիկական բաժնում:

1972 թ. ընդունվել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտել է 1976 թ.: Նրա գրած ավարտաճառը արժանացել է համամիութենական առաջին կարգի մրցանակի և պարգևատրվել ոսկե մեդալով:

1976 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին դասավանդել է Հոկտեմբերյանի շրջանի Եղեգնուտ գյուղի դպրոցում: Նույն տարվա նոյեմբերին զորակոչվել է զինծառայության: Վերադառնալով բանակից, 1978—80 թթ. աշխատել է թեթև արդյունաբերության մինիստրության ազդերի բաժնում:

1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. գերազանց պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Զրադաշտության արձագանքները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ և պայքարը նրա դեմ», ավարտել է ճեմարանը և նույն թվականի հունիսի 22-ից անցել է աշխատանքի Մայր Աթոռի գանձատանը:

1985 թ. սեպտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ուղարկվել Լենինգրադի հոգևոր ակադեմիա, լրացուցիչ Աստվածաբանական կրթություն ստանալու:

1986 թ. օգոստոսի 20-ին նշանակվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ, միաժամանակ դասավանդելով հիմնական Աստվածաբանություն առարկան:

1987 թ. ապրիլի 4-ին Պարգև աբեղան պաշտպանում է իր վարդապետական թեզը հետևյալ վերնագրով՝ «Աստվածաճանաչման ճանապարհները ըստ քրիստոնեական վարդապետության և յոգայի ուսմունքի» թեմայով:

1987 թ. հունիսի 20-ին Լենինգրադի հոգևոր ակադեմիայի աստվածաբանական ասպիրանտուրայում փայլուն կերպով պաշտպանելով իր ավարտական թեզը՝ «Աստվածճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության և միստիկական ուսմունքների՝ յոգայի, թեոսոֆիայի և անտրոպոսոֆիայի» թեմայով, ստանում է աստվածաբանության թեկնածուի աստիճան:

1987 թ. հունիսի 27-ին Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Պարգև վարդապետը նշանակվում է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր, շարունակելով դասավանդությունը Էջմիածնի հոգևոր ճեմարանում իբրև ջատագովական աստվածաբանության դասախոս:

1988 թ. հոկտեմբերի 12-ին Պարգև վարդապետը, թարգմանելով իր թեկնածուական թեզը հայերենի, ներկայացնում է Վեհափառ Հայրապետին և ստանում Հայ Եկեղեցու ծայրագույն վարդապետի աստիճան: